

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Ըստ սկադ. Ն. Մառի)

506-2001

Մինչեւ արիւս - եւրոպացիները երեւալը, Հայաստանը, ինչպէս եւ Կովկասեան աշխարհի միւս երկրները, բնակած էր զանազան յարեթական ժողովուրդներով ու ցեղերով: Ամբողջ երկրում տարածւելուց յետոյ, արիւս - եւրոպացիք ձուլւեցին տեղական այլ եւ այլ ժողովուրդների հետ, եւ դրա հետեւանքով ստեղծւեցին մի շարք խառն տիպի լեզուներ: Հայաստանի խառն լեզուներից արիւս-եւրոպական շերտը դեռ երկար ժամանակ աճում էր ի հաշիւ իրանական տարրի: Հայերն իրենք պահել են յարեթա - արիւս - եւրոպական լեզուի երկու խառն տիպ, որոնք կոչւում են երկու պայմանական անուններով. մէկը գործածական է միայն հայերի մօտ՝ հայկական, միւսը միջազգային է՝ հայերէն: Առաջինը այժմ մեռած է - եկեղեցու եւ հին դրականութեան լեզուն: Հին ժամանակները նա ոչ միայն դրական լեզու էր, այլեւ Հայաստանի հարաւ - արեւելեան մասում, Սիւրիայի եւ Պարսկաստանի սահմանի վրա ապրող ժողովուրդներից մէկի կենդանի ու գործածական լեզուն էր: Երբ այս ժողովուրդը տիրեց բոլորակ Հայաստանին, հայկական լեզուն դարձաւ հայ նախարարների լեզուն նաեւ երկրի այն մասերում, ուր բնիկ լեզուն միւսն էր՝ հայերէնը: Վերջինս հետզհետէ վերածւեց աւատական Հայաստանի հասարակ ժողովուրդի՝ ռամկի լեզուն:*) Սա նոյնպէս հին եւ առաջինին ազգակից լեզուն է՝ ինքնուրոյն եւ լեզւարանօրէն առաջինին հաւասարազօր, որ մեզ հասել է բազմաթիւ բարբառներով: Երկու լեզուների մէջ էլ արիւս - եւրոպական

*) «Արմէն» բառը հայերէնում ստացաւ «ռամիկ» մեք (փոխանակ «արամիկ») եւ ճշմանակում էր «հասարակ ժողովուրդ», ոտորիմ դասակարգ: Այստեղից եւ «ռամիկական», այսինքն՝ «հայերէն» լեզուն՝ հասարակ ժողովրդի լեզու ճշմանակութեամբ:

649

տարրերին միացած են յարեթական տարրեր: Դրա արդիւնքն է Հայաստանի երկու լեզուների ինքնատիպ, զուտ Հայկական բնոյթը, ինչպէս եւ հայերի ազգակցութիւնը Կովկասեան աշխարհի բնիկների, մասնաւորապէս վրացիների հետ:

Հայկական բառարանում յարեթական ծագում ունեցող բառերը եթէ նոյնիսկ քանակով աւելի չեն, բայց իրենց ներքին իմաստով եւ ժողովրդական հոգեբանութեան խորքերը հետ ունեցած կապով գերազանց են: Ազգականութիւն նշանակող բառերը՝ հայր, մայր եւ ուրիշներ, մեծ մասամբ արիա - եւրոպական ծագում ունին, թւական անունները՝ արիա - եւրոպական են, երկնքի, գետնի, ջրեր, հոգի-շունչի պէս բառերը եւ հոգեկան յոյզեր - վախ, ուրախութիւն եւ այլն - արտայայտող բայերի մէկ կարեւոր մասը պատկանում են յարեթական տարրին:

Մշակութային կեանքի շատ կողմեր արտայայտւում են յարեթական ծագում ունեցող բառերով, ինչպէս ծառերի, եւ, ասհասարակ, բուսական աշխարհի, հողի մշակութեան ու շինարարութեան, երկրագործական գործիքների, մետաղների անունները, ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, հմայութեան եւ գուշակութեան դանազան ձեւերը, Կովկասեան աշխարհի կոսպաշտական կրօնի հետ կապւած անասունների անունները, ինչպէս Խզ, արջառ, ոչխար, գոռի կեմ-դանի, գոհաբերութիւն եւ այլն: Նմանապէս յարեթական ծագում ունեն եւ նախնական բնկերային կազմակերպութեան անունները, ինչպէս տոհմ, ժողովուրդ, ազգական, ժողով:

Մի խօսքով, հայերը Կովկասեան աշխարհի միւս ժողովուրդների հետ միասին յարեթական բնիկներից ժառանգել են երկրադպր-ծութիւնը, մետաղագործութիւնը, աստուծոյաշտութիւնը, ատեւար-րի հեմնական տարրերը, ողջ խաղաղ մշակոյթը:

Արիա - եւրոպական տարրերը հայերի մօտ տիրապետող են. ոստանական բառերի, դէնքի եւ ոստանական սարքի եւ վարչութեան ու թագաւորութեան հետ աղբնչութիւն ունեցող բառերի մէջ եւ արդ բոլոր բառերը ծագում են իրաներէնից, յատկապէս՝ պարսկերէն լեզուից: Ինչպէս արիա - եւրոպացիք, ախալս եւ դէպի Հայաստան արշաւող բոլոր հետագայ մեծ զանգւածները, մէջը հայւելով եւ սեյթուկներին ու մոնղոլներին, քաղաքականոնէն գերակշիռ դիրք էին ստանում ոչ իրենց խաղաղ քաղաքակրթութեամբ եւ ոչ իսկ մարմնաւոր ուժի ոգրութեամբ, այլ գերազանց զինուորական կազմակերպութեամբ եւ մերժենիս հետ կապւած պետականութեամբ: Այստեղ էլ որոշ չափով կրկնեց հոսմամայեցիների տիրապետութեան պատմութիւնը յոյների վրա: Մշակոյթով աւելի բարձր աստիճանի

վրա գտնուող բնիկների հետ ընդհարելուց յետոյ, ոչ գտարիւն արեացիներ ու իրանացիներ մնացին, ոչ էլ գտարիւն սելջուկներ, իսկ մոնղոլները բոլորովին լուծւեցին տեղական ազգաբնակութեան մէջ:

Իրանացիների ստեղծած հին հայկական թագաւորութիւնը ընկաւ 5-րդ դարի սկզբին, Քրիստոսից յետոյ. նա անմիջապէս որեւէ տուրք չմտցրեց քրիստոնէական հիմքերի վրա կառուցւած հայ ազգային մշակութի մէջ: Ինքնուրույն կերպով կազմակերպւած եւ ընտրովի կաթողիկոսի գլխաւորութեան տակ գտնուող եկեղեցին միայն հետագային դարձաւ հայ ազգային կեանքի հիմքերից մէկը: Պաշտպանելով հայ ժողովրդի իրեն նեցուկ հանդիսացող մշակութային հասարակական ստեղծագործող խաւերը, եկեղեցին ապրում էր ժողովրդի ընկերային դարդացման բոլոր փուլերը: Յանձին զանազան երկրներում գտնուող կուսակրօն հոգեւորականութեան համախումբ ու կազմակերպւած վիճակի՝ նա պահեց իր կշիռն ու ղեկավարութիւնը ազգային գործերում եւ անկման այն ժամանակաշրջանում, երբ հոգեւորականութեան միւս մասը բոլորովին նւաստացած էր ճնշւած ժողովրդի հետ միասին:

Հին հայկական թագաւորութեան շրջանում քրիստոնէայ եկեղեցին հեռու էր արքայական տնից եւ նոյնիսկ հակառակ էր նրան: Պարսկական ծագում ունեցող Արշակունեաց հարստութիւնը ժամանակ չունեցաւ ազգայնանայու: Արշակունիների պաշտօնական լեզուն յունարէնն էր, սր աւանդաբար գայիս էր Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակներից: Արշակունիների Հայաստանում կառուցած շէնքերը կրում են հռոմէական բնոյթ, ինչպէս, օրինակ, Փառնիի կուսպատական տաճարը: Արշակունեաց շրջանի քաղաքների դարդացումը մի կարեւոր չափով արդիւնք էր յարեթական աւելտրի մնացորդների կամ օտար վաճառականների, գլխաւորապէս հրէաների եւ արամացիների ներգրաւման: Մոսիսէս Խորենացին, իբրեւ աւատական Հայաստանի տեսակէտների արտայայտիչ, չէ ծածկում իր վերաբերումը դէպի քաղաքացիները, իբրեւ այն ժամանակւայ հայ ազգի երկրորդական, թէեւ արժէքաւոր տարրը: Մոսիսէս Խորենացու այս տեսակէտը, բնականաբար, ոչ թէ դարաշրջանի իրական պատկերն է ներկայացնում, այլ իդէալականացած բնութեամբ Հայաստանի առաջին Արշակունի թագաւորի մասին, համաձայն Խորենացու ժամանակների, այսինքն՝ մօտաւորապէս 8-9-րդ դարի ազգային դադափարների: Հայոց ազգային վերածնութեան այդ դարաշրջանում է, որ հայոց գրականութեան մէջ երևան է գայիս ոչ միայն բովանդակ Հայաստանի միութեան դադափարը, այլեւ Կովկասեան աշխարհի արդէն ձեւակերպւած ազգային բոլոր խմբաւորումների՝

հայերի, վրացիների եւ աղանայիների, ընչպէս եւ այս միացեալ ուժի վրա համաշխարհային զինուորական իշխանութեան հաստատման միտքը :

Որպէս միացնող ոյժ, Մովսէս Սորենացին ներկայացնում է հայոց առասպելական թագաւոր Տրգրանին: Նոյն գաղափարը էլ աւելի պայծառ դժերով Սորենացին վերագրում է Հայաստանի արչակունեաց առաջին թագաւոր Վաղարշակին: Միութեան նոյն այդ գաղափարը արտայայտում են եւ ազգային վերածնութեան այն վաւերագրերը, որոնք պատմում են քրիստոնէութեան յաջողութիւնների մասին Հայաստանում: Քրիստոնէութեան մուտքը հայ պատմագիրները ներկայացնում են որպէս ընդհանուր Կովկասեան գործ, որ միացնում էր հայերին, վրացիներին եւ աղանայիներին, նոյնիսկ արխաղներին: Կովկասեան ժողովուրդների եղբայրական միութեան գաղափարով տոգորելի են ոչ միայն հայ հայրենասէրները, այլեւ ուղղափառ Բիւզանդիոնի այնպիսի մը խորունկ մտածող, որպիսին էր պատրիարք Փոտիոսը (Ծրդ դար): Բիւզանդիոնն այն ժամանակ զեռ ի վիճակի չէր ըմբռնելու իրենի համար ստեղծագործական մեծ արժէք ներկայացնող այդ գաղափարը: Ընդհակառակը, Բիւզանդիոնը ոչինչի առջեւ կանգ չառաւ պատակտելու համար Կովկասեան աշխարհը եւ կործանելու այդ գորւար ազգակը, որ այն ժամանակ քրիստոնէական մշակոյթի միակ յենարանն էր Արեւելքում: Այդ ազգակի տկարացման հետեանք էր խոշոր չափով եւ Բիւզանդիոնի անկումը:

Միութեան գաղափարները հայ պատմական վաւերագրերը ներկայացնում են եւ այն ժամանակ, երբ խօսում են քրիստոնէական լուսաւորութեան յաջողութիւնների մասին: Հայերէն այբուբենի դիւտը պատկերացւում է իրրեւ համակովկասեան նշանակութիւն ունեցող մի դէպք: Վաւերագրի հեղինակի ապրած ժամանակը, սակայն, կամ միջովայրը այլեւս հաշիւի չէր առնում աղանայիներին, որպէս ինքնուրոյն ազգային հաւաքականութիւն, եւ համակովկասեան այս գործում հայոց թագաւորից յետոյ սեղ էր տրւում միայն վրաց թագաւորին:

Երբ քրիստոնէութիւնը արմատներ ձգեց ողջ Հայաստանում եւ սկսեց ազգայնանալ, որի առաջին հետեանքը եղաւ ոչ միայն հայկական, այլ վրաց այբուբենի դիւտը, հին հայոց թագաւորութիւնը, ամենայն հաւանականութեամբ, այլեւս գոյութիւն չունէր: Միայն սեղական բնոյթ կրող ազգայնացած քրիստոնէական առասպելը կարող էր հայկական այբուբենի դիւտը կապել արչակունեաց վերջին թագաւոր Վաղարշակի գործունէութեան կամ ժամանակի հետ: Սա

մի տուրք էր վերածնութեան դարաշրջանին, ըստ որի մարդիկ ուզում էին կապուել ոչ միայն ազգակից ժողովուրդներին, այլև հայրենի երկրի անցեալի հետ: Իրօք ընկերային միջավայրը, ուր ամբաստանաբար ազգային եկեղեցին, աղնականութիւնն էր, հայ նախարարները: Հայերէն տառերն առաջ հնարեցին Հայաստանի հարաւորեւելքում, անյայտ միսիոնարների ձեռքով, Աստուածաշնչի առաջին դրբերը թարգմանեցին «հայկական» լեզուի, եւ հայ նախարարները նպաստեցին թէ քրիստոնէական դրականութեան եւ թէ իրենց սըրտին հարազատ հայկական լեզուի տարածման բովանդակ Հայաստանում:

Իրանականութեան շրջանում Հայաստանը դռնուում էր Արեւելի համաշխարհային դէպքերի հանդոյցում: Կոստանտնուպոլիսի Արեւելքի ու քրիստոնէայ Արեւմուտքի բախումները ոչ միայն Հայաստանում էին դարձանում, այլև տեղի էին ունենում նրա բնակիչների անմիջական մասնակցութեամբ: «Պայքարը հաւատի համար» 5-րդ եւ 6-րդ դարերի աւատական Հայաստանում միայն հայկական հողերի աշխարհագրական սահմանում կատարւած պատահական մի դէպք էր, այլ մի օղակը երկու տարբեր կրօնա-ընկերային աշխարհների ընդհարման շղթայի մէջ. յարատեւ այդ պայքարում քրիստոնէայ կողմի շահերը պաշտպանուում են «Կովկասեան աշխարհի» քրիստոնէայ ժողովուրդների անջատ կամ միացեալ դէնքի ուժով եւ միայն հետագային, աստիճանաբար սկսում է մասնակցել եւ Բիւզանդական կայսրութիւնը:

Ի հարկէ, Հայաստանի ղեղարկեստը այս դարաշրջանում դարձանում է համաշխարհային հոսանքների ընդհանուր կանոններով օրինակի համար, քանդակադործութեան մէջ ընդօրինակում է հին քրիստոնէական շինարարութեան այս կամ այն տիպը, մտցնելով որոշ տեղական առանձնայատկութիւններ: Նոյնքան ընդհանրական են եւ այն նիւթերը, որոնք ընդունւած են արդէն որոշ դարձագման հասած տեղական լեզուներով դրականութեան մէջ:

Տողորւած ամբողջ աշխարհին յատուկ ընդհանուր քրիստոնէարանական խնդիրներով՝ հայ գրողները դադարաւորական այդ պայքարին մասնակից էին դարձնում լայն հասարակական խաւերը ոչ միայն Հայաստանում, այլև աւելի ընդարձակ շրջաններում. պայքարող կողմերը դասաւորուում էին ոչ թէ ըստ ազգային յատկանիշի, այլ եկեղեցական-հասարակական հոսանքներով. յաճախ միեւնոյն բանակում գտնուում էին տարբեր ազգութեանց ներկայացուցիչները, միեւնոյն ազգութիւնը բաժանուում էր հակամարտ կուսակցութիւնների: Այս կրօնական-մտաւոր խմորումը բարդացաւ մանաւանդ այն

կենսական վերելքով, որ ստացւեց իբրև հետեւանք պարսկահայերի եւ յունահայերի աւելի սերտ հաղորդակցութեան ու միութեան: Բնական է, որ յունական մաքի ղեկավար դերը աւելի ուժեղացաւ, երբ հայկական հողերի գրեթէ կէսը Պարսկաստանից անցաւ Բիւղանդիոսին, ուր քրիստոնէական նախանձախնդրութեամբ լեցւած հայ իշխանական դասը գտաւ իր ուժերի կենսարոնացման համար պահանջւած հիմքերը:

Հայ հոգեւորականութեան շրջանում տեղի է ունենում սիւրբիստէր եւ յունասէր գրական դպրոցների պայքար, որ հող է պատրաստում ազգային ուղղութեան համար՝ որոշ թեքումով հարազատ իրանական մշակութային աշխարհից դէպի յունական լուսաւորութիւնը: Այդ պայքարի ելքի հետ կապւած են ազատագրումը սիւրբիական դպրոցի միակողմանի եկեղեցական ազդեցութիւնից, յունական կրթութեան անմիջական իւրացումը իր փիլիսոփայական ու քերականական դպրոցներով, այբուբենի կատարելագործումը, Ս. Գրքի թարգմանութեանց սրբագրութիւնը, ազգային ինքնուրոյն շահերի աճումը, որի կապակցութեամբ գրականութեան մէջ ուժեղանում է հետաքրքրութիւնը դէպի երկրի պատմական հարցերը: Նախարարները նպաստում էին մենաստանների գրական գործունէութեան զարգացման, հիմնում էին նոր վանքեր: Սրանց մէջ, զուտ քարոզչական կրօնական վարդապետութեան հետ մէկտեղ, յունական կրթութեան ազդեցութեան տակ, զարգանում էր յունասիրական մտաւոր հոսանքը՝ հիմնւած յոյն փիլիսոփայութեան, գլխաւորապէս Արիստոտելի խորունկ իւրացման վրա: Նախադաշ կերպով նախապատրաստեց աշխարհիկ լուսաւորութեան վերածնութիւնը եւ դրա հետ միասին հայ ժողովրդական կեանքի ինքնուրոյն սկզբունքների պարզաբանումը, ազգային ուղղութիւնը: Բայց այդ ժամանակ աւատապետական Հայաստանի գլխին պայթեց հին թագաւորութեան անկումից յետոյ առաջին աւերիչ կայծակը, որի առաջ բերած աւերը Հայաստանում, սահմանորոշ մի դիժ դարձաւ երկու արտաքին գործօնների՝ գտարիւն իրանականութեան եւ իրանական մահմեդականութեան միջև: Այդ դիժը անցնում է ծրու դարի վերջի վրայով, երբ երկիրը բոլորովին կործանւած էր արարների ձեռքով, նախարարները ենթարկւել էին դաժան բնաջնջման, քրիստոնէական քանդակագործութեան փառաւոր գործերը քար ու քանդ էին արւած: Մի խօսքով նախորդ դարերի մշակութային աշխատանքի բոլոր պտուղները հողի էին հաւասարեցւած:

Հայաստանի կործանումը արարների ձեռքով հայ կրթւած շրջաններում առաջ բերեց զգացական - ումանտիկ մի տրամադրու-

թիւն, հայրենիքի անցեալի իդէալականացում եւ բոլորովին նոր շինարարութիւն գրականութեան բնագաւառում՝ ընկերային – քաղաքական նոր հայեացքների համաձայն: Նկատուած է յամառ ձգտում վերանորոգելու վերջնական կործանումից փրկւած հին գրական յուշարձանները: Այդ յուշարձանների պահպանւած մասերն ու բեկորները, այլ եւ մնացած կապերը Հայաստանի ամենազարգացած վայրերի՝ Դելինի եւայլնի հետ նպաստում են գրական զարգացած ոճի պահպանութեան եւ հնի յաջող ընդօրինակման:

Նոսրանում են շարքերը այն նախարարները, որոնք աջակցում էին հայկական լեզուի մաքրութեան ու տիրապետութեան: Նախարարների մեծ մասը ոչնչացւած էր. մնացածներն էլ հեռանում են խալիֆաների մօտ, կամ Բիւզանդիոն: Սրանք բոլորն էլ «ապագադայնանում» են, աւելի ճիշտ, աստիճանաբար զրկւում են ազգային դէմքի յատկանիշերից, կրօնից ու լեզուից, բայց չեն կորցնում բնական եւ ներքին պատկերը, չեն կորցնում հարազատ ազգից ժառանգած հոգեւոր յատկութիւնները, որոնք նրանց մէջ հիմնաւորւած էին Կովկասեան մշակութային աշխարհի բազմադարեան աշխատանքով: Կարելի է հատորներ լեցնել՝ քաղելու դանազան ժողովուրդների շրտամութիւնից, ուր արձանագրւած են Հայաստանից դուրս եկած աղնական կամ սովորական տարազիրների գինեւորական կամ հանրօգուտ գործերը: Սա մի յիշատակելի ծառայութիւն է, որ ժողովուրդը մատուցել է մարդկութեան:

Բուն Հայաստանում, առեւտրական մեծ քաղաք Դելինի գլխաւորութեան տակ գտնուող կենտրոնական շրջանները, մտան խալիֆայի կազմի մէջ եւ կազմեցին կէս-անկախ մահմետական իշխանութիւններ – էմիրութիւններ: Հայրենի երկրին հաւատարիմ մնացած հայ նախարարները սպաստարան էին որոնում Հայաստանի ներսերը, այն մասերում, որոնք զերծ էին մնացել արաբական գրաւումից: Այդտեղ կազմեցին անկախ իշխանութիւններ, որոնք հետագային դարձան թաղաւորութիւններ: Դրանց մէջ ամենէն աւելի տոկունութիւն ցոյց տւեց եւ գերակշիռ տեղ զբաւեց Անիի իշխանութիւնը, որ առաջ էր եկել բուն Հայաստանի ամենահիւսիսային մասում: Պատահականութիւն չէ, որ այս իշխանութիւնների ծագումը գուզազիւրում է Պարսկաստանի ազգային վարթօնքի շրջանին, նրա իրանական ոգու բողոքին ընդդէմ ամէն ինչ հարթող խալիֆութեան, որովհետեւ հայ իշխանները ամենայն իրաւունքով կարող էին յաւանորոգելու ցոյց տալ, թէ իրենց է պատկանում նախամահմետական իրանականութեան լաւագոյն պահպանի պատիւը:

Հարաւարեւելքում հեղհեղէ հալուում է՝ այն ժողովուրդը, որ

խօսում էր «հայկական» լեզուով: Այս վերջինը անհետանում է գործնական ասպարեզից՝ թողնելով խորունկ հետք միւս «հայերէն» լեզւի հարաւային բարբառներում: Այս բաժանումը հարաւային-հայկական եւ հիւսիսային հայկական բարբառների արտացոլում է հայ ազգաբնակչութեան համապատասխան ազգազրական կազմը. նրանով բնորոշում են հայ ժողովրդի պատմութեան հետագայ երկու մշակութային հոսանքները:

«Հայկական» լեզւի թուլացումով ուժեղանում է ազգեցութիւնը տեղական կամ «հայերէն» լեզւի, որ անմիջական ծնողն է մեր ժամանակների հայերէնի, եւ քրիստոնէական մշակոյթը համեմատաբար դառնում է աւելի մատչելի ժողովրդին: Ժողովրդի մէջ սկիզբ են առնում կրօնական խմորումներ, իբրեւ հետեւանք յարեթական հաւատի ազդուումների առաջ բերած հակազդեցութեան: Ծնւում են տեղական աղանդներ, որոնցից մէկը, Պողիկեան անունով, ստանում է համաշխարհային նշանակութիւն շարժելով դէպի արեւմուտք՝ բարդանում է նոր գծերով եւ վեր է ածւում նոր ձևերի: Տիեզերական քրիստոնէական վարդապետութիւններից մէկը՝ մոնոֆիզիտականը՝ ստանալով ուղղափառ եկեղեցուն մօտեցնող սրտ առանձնայատկութիւններ, դառնում է հայերի ազգային եկեղեցին, որի հետեւանքով ուղղափառ հայ ազգաբնակչութիւն ունեցող ամբողջ շրջաններ անջատւում են հայութիւնից եւ ձուլւում յոյներին կամ վրացիներին հետ: Պայքարը յոյն-ուղղափառ դաւանանքի դէմ՝ զուտ եկեղեցական գեանից փոխւում է ազգային հողի վրա եւ վեր է ածւում հայ - յունական կամ հայ-վրացական պայքարի, թէեւ յոյն-ուղղափառ կրօնի հետեւորդները զտարիւն հայեր էին:

Հին քրիստոնէական արեւստը տեղի է տալիս նոր, ազգային արեւստի առջեւ. հետզհետէ շինարարական նոր ձևեր են ծնունդ առնում. սկզբի շրջանում, երկար ժամանակ, մինչեւ 10-րդ դարը շինողները զբաղւած են կործանւած տաճարների վերանորոգութեամբ: Հետագային, երբ հիմնւում է հայկական նոր թագաւորութիւնը, 10-րդ եւ 11-րդ դարերում, թագաւորները իրար հետ մրցում են փառահեղ տաճարների կառուցման գործում:

Նախարարները շարունակում են աջակցել մենաստանների դրական գործունէութեան. հիմնում են նոր վանքեր, որոնք վեր են ածւում ընդարձակ մշակութային հիմնարկութիւնների:

Ազգային-եկեղեցական հոսանքների ուժեղացումը քաջալերւում է հին ժամանակներից կամ ժողովրդի հաւատից բխող դարաւոր հիմնարկութիւնների կողմից: Ժողովրդի գլխաւորութեան մէջ քրիստոնեայ հոգեւորականութիւնը բռնում է այն տեղը, որ կուսպաշ-

տուժեան շրջանում պատկանում էր քուրմերի դասին: Ազգային հոգեւորականութիւնը վաղուց արդէն կազմակերպուել եւ որոշ նւիրապետութեան ձեւ էր ստացել: Եկեղեցական նւիրապետութիւնից դուրս լայն զարգացում էր ստանում վարդապետական ուխտը, որ ընտրեալները միութիւն էր եւ կազմուած էր ժամանակի արհեստակցական միութիւնների սկզբունքով: Ուխտի անդամի անունն իսկ՝ վարդապետ, որ նշանակում է ուսուցանող, յիշեցնում է սրմնագիրները կամ ճարտարապետների միութեան պետի անունը. վարդապետ նշանակում էր նաեւ վարպետների պետ, ֆարապապետ:

Վերաքննութեան է ենթարկուած ամբողջ պատմական գրականութիւնը՝ հիմք ունենալով եկեղեցական-կրօնական (հակաքաղքեւդոնական) շահերը. առաջ են դալիս նոր կամ ի նորոյ լմբաբերող աշխատութիւններ եկեղեցական կեանքի բոլոր բնագաւառների համար:

Առանձնապատուկ ժողովրդական լեզու ունեցող նոր միջավայրը ստիպում էր գրական յուշարձանները յարմարցնել ժողովրդական կենդանի լեզւին, սակայն կենդանի լեզւի տարրերի առատութիւնը երկերի մէջ պատճառ է դառնում, որ նրանք գրական խաւերում յաջողութիւն չունենան: Միւս կողմից, ժամանակի գրողները, որոնք բացառապէս պատկանում էին հոգեւորական դասին՝ հաւատարիմ մեռած լեզւի աւանդութիւններին, ընկանաբար, խանգարում են, որ մատենագրութիւնը դառնայ լայն դանդաղների մատչելի, լինի իրապէս ժողովրդական: Վերածնութեան առաջին իսկ վայրկեանից նախարարները պատուէր տալով գրի առնել իրենց տոհմի գործունէութիւնը նպատակում են ազգային պատմութեան զարգացման: Մանաւանդ Բագրատունեաց իշխանները շատ էին աշխատում հաւաքել իրանական ծագում ունեցող ժողովրդական բանահիւսութիւնը. նրանց աչքին Հայաստանի թագաւորութեան վերականգնման հեռանկարը պատկերանում էր իբրեւ նախարարների սրտին հարազատ իրանական մշակոյթի վերականգնում, որպէս հակակշիռ մահմեդական քաղաքակրթութեան, բայց յունական գրականութեան գաղափարներով սնուած հայ գրողները իրանականից խորշում էին ոչ պակաս, քան մահմեդական մշակոյթից: Յաիշտակած եկեղեցական-ազգային գաղափարով՝ հայ պատմագրութիւնը խզում է ամէն կապ յարեթական աշխարհի հետ. Հայաստանի մշակութային նւաճումների համակովիասեան նշանակութիւնը միազնում է:

Բագրատունեաց հայ թագաւորները, վերականգնելով իրանական աւանդութիւնները՝ իրենց յայտարարեցին շահնշահներ, այսինքն՝ արքայից արքաներ եւ ընթանալով յարեթական ժողովուրդների

միացման պատմական ճանապարհներով՝ յաջողեցին թագաւոր դառնալ հայկական եւ վրացական երկրներէ, որ նրանց իրաւունք տւեց իրենց անւան մէջ մտցնել «թագաւոր հայոց եւ վրաց» տիտղոսը: Բայց հայոց թագաւորի նշանակութիւնը նսեմանում էր հայոց եկեղեցու համազգային պետի՝ կաթողիկոսի կողմից, որի իշխանութիւնը արդէն այն ժամանակ, նւիրագործւած դարաւոր աւանդութեամբ, տարածւած էր բոլոր հայերի վրայ, Բաղրատունեաց թագաւորութեան սահմաններից էլ դուրս:

Միւսնոյն ժամանակ երկրի ներսը, մի կողմից տեղի էր ունենում նիւթական միջոցների կենտրոնացում, սակաւաթիւ ազնւակաւութեան եւ աւատականացած եկեղեցու ներկայացուցիչների ձեռքին, միւս կողմից, գիւղացի ժողովուրդը ճնշւում էր ծանր տուրքերի եւ հալածանքների տակ. նախարարներն ու եկեղեցին անողորմ կերպով հարստահարում էին ազգաբնակչութիւնը եւ դատանօրէն հալածում, մանաւանդ, կրօնական հայեացքների տարբերութեան համար:

Դրսից շարունակւում է Բիւզանդիոնի թշնամական վերաբերումը գլխաւորապէս այն պատճառով, որ մահմետականները ճանաչել էին կովկասեան աշխարհի, այն ժամանակեայ բոլոր ասած, «հիւսիսային ժողովուրդները» եւ, առաջին հերթին, հայ թագաւորների միջազգային դերը: Բիւզանդիոնի արշաւանքները դէպի Հայաստան ու Վրաստան ստացան պատժիչ գործողութեանց կերպարանք, եւ ի վերջոյ տեղի ունեցաւ հայոց Գագիկ Բ. թագաւորի դաւադիր հրաւէրը Բիւզանդիոն եւ Հայաստանի վերջին թագաւորութեան անկումը 1043 թ.:

Սելջուկների ներխուժումը քսան տարի յետոյ եւ Հիւսիսային Հայաստանի կործանումը հարուստ մայրաքաղաք Անիի հետ միասին մի պահ կարծել տւեց թէ հայ ժողովրդի գոյութիւնը բուն հայրենիքում վերջանում է: Այդպէս էին կարծում ժամանակակից հայ պատմագիրները: Պեղումներից դուրս եկող քարերից տեսնում ենք, որ 1061 թ. մինչեւ 1150 թ. ամէն շինարարութիւն կանդ էր առել բուն Հայաստանում, թէեւ մշակութային աշխատանքը չէր մեղել վերջնականապէս: Ոգին ընկճւած էր եւ մարդու ներքին կրօնական վերանորոգութեան մէջ էր մխիթարութիւն փնտրում՝ «մանկով անմիջական հաղորդակցութեան մէջ Աստուծոյ հետ, առանց եկեղեցական ծիսակատարութեան եւ նւիրապետութեան»: Կրօնական այս դէրվիշութիւնը, որ Հայաստանում զարգացաւ 10-րդ եւ 11-րդ դարերին, պաշտօնական եկեղեցու կողմից ընդունւեց թշնամանքով եւ խիստ հալածանքի ենթարկեց:

Բուն Հայաստանում ժողովրդական դանդաճանքը Հայրողացան լայնորէն օգտագործել այդ ստեղծագործական սկզբունքները, որովհետեւ եկեղեցու դաժան հալածանքները պաշտպանութիւն դասն եւ նախարարները կողմից, իսկ հետագային տիրող դարձած նոր դասակարգը՝ հայ քաղքենին հետու էր կանգնած թէ հասարակ ժողովրդից եւ թէ, առհասարակ, նրա կրօնական սպրոնմանրից:

Հայկական անկախութիւնը վերածնեց եւ աւատապետութիւնը ծաղկեց գաղութում, Կիլիկիայի մէջ, ուր հեռաւոր հարաւարեւմուտքում, Միջերկրական Ծովի եզերքին, տարազէր հայ նախարարները հիմք դրին նոր թագաւորութեան: Այս ձեռնարկի յաջողութեան նպաստեց վերջացի ազգաբնակչութիւնը, որի ներգաղթը դէպի Կիլիկիա վաղուց էր սկսած հարաւային Հայաստանից, որ մտել էր լաւթֆատի սահմանների մէջ: Կիլիկիայի գաղութային պետութիւնը ահագին նշանակութիւն ունեցաւ բուն Հայաստանի մշակոյթի պատմութեան համար: Նա հայերի առջեւ բաց արաւ Եւրոպայի դուռը, մասամբ մօտեցրեց Եւրոպային: Եւ հարաւային հայերի ձգտումը կապուելու արեւմտեան Եւրոպայի կաթոլիկ մշակոյթի հետ դեռ այն ժամանակները բուն բողոք առաջ բերեց հիւսիսային հայերի մէջ: Հին - հայկական դրականութեան յուշարձանները մեծ մասը կրում է Կիլիկիան հայերի աշխատանքի դրոշմը: Կիլիկիայում զարգացաւ հայոց, այսպէս կոչւած, արեւմտեան - հայկական կամ, աւելի ճիշտ, հարաւային - հայկական արւեստը: Այստեղ սկիզբ դրեց հայերէն գրական նոր, նոյնպէս հարաւային լեզուն, որ հետագային ստացաւ արեւմտեան լեզու անունը, թէեւ իր հիմքում դանդում է հարաւային - հայկական բարբառը:

Բուն Հայաստանում աւատական կեանքը մէկէն վերջ չգտաւ: Անիի կործանումից յետոյ հայ ազգային ձգտումներով տագորւած իշխանական միջնախորը պահպանեց հիւսիս - արեւելեան Հայաստանում, ուր կողմեց Սազնի իշխանութիւնը, որ աչքի ընկնող դեր խաղաց մոնղոլական տիրապետութեան շրջանում: Բուն հայոց քաղաքական կենտրոնը մասամբ սկսեց տեղափոխուել դէպի հիւսիս, արիւնով եւ մշակութային աւանդութիւններով հարազատ յարեթական երկիրը, ուր կազմակերպուեւ եւ արդէն կարեւոր չափով ձեւակերպուել ու ամրացել էր վրաց ազգային հաւաքականութիւնը:

Այդ այն դարաշրջանն էր, երբ Առաջաւոր Ասիայում փթթում էին մանր իշխանութիւններն ու թագաւորութիւնները: Մանր քրիստոնէայ թագաւորութեանց ուժերի գերակշռութեան հետ կապւած են եւ խաչակրաց արշաւանքները Եւրոպայից: Կովկասեան աշխարհում Բագրատունեաց թագաւորութեան անկման տարիներին նոյն

Բազրատունիների ձեռքով ստեղծուած էր վրաց թագաւորութիւնը : Բազրատունիների ձեռքով ստեղծուած արխաղական թագաւորութիւնը սկզբում պայքարում էր հայոց թագաւորութեան դէմ , բայց խորտակելով մահմեդականների տիրապետութիւնը կողկասում եւ քշելով նրանց Թիֆլիսից , նա վերածւեց վրաց ազգային հաւաքակա- նութեան , որ ձգտում էր համախմբել կողկասեան յարեթական ու կէս-յարեթական բոլոր ցեղերը , որոնց թուում եւ հայ ժողովուրդը : Բայց շուտով , 13-րդ դարի առաջին կէսերին , պայթեց մի նոր փո- թորիկ՝ մոնղոլական արշաւանքը , որ խորտակեց եւ վրաց թագա- ւորութիւնը :

Այդ վրաց թագաւորութեան ամենափայլուն ժամանակները , 13-րդ դարի սկիզբը , նորից ուժեղացաւ քաղաքների եւ առաջին հերթին վերածնուած Անիի նշանակութիւնը : Հայկական նոր քաղաքների հետ միասին աճում ու զարգանում էր եւ հայ քաղքենի դասակարգը : Հայ իշխանները դեռ գոյութիւն ունէին եւ մեծ դեր էին կատարում , բայց ոչ որպէս ազգային - կազմակերպած հայկական մի ոյժ , որի տեղը բուն Հայաստանում զբաւեւ էր քաղքենի տարրը՝ հարուստ առեւտրականների եւ արհեստաւորների դասակարգը իր համաշխար- հային կապերով : Սրա շնորհիւ վերածնւեց բուն Հայաստանի մշա- կութային կեանքը : Գրականութեան մէջ մուտք դործեց քաղքենի - աշխարհիկ հոսանքը : Ստեղծւեց մի նոր հայկական արւեստ , որի ճարտարապետական գլուխ գործոցները այսօր էլ , իրենց աւերակ վիճակում , հիացում են պատճառում արւեստի ամենանուրբ դնա- հատողներին : Եկեղեցական ճարտարապետութեան կողքին զարգա- ցաւ եւ քաղաքացիականը՝ լայն հիւժք ունենալով աւելի սերտ կապը իրանա - մահմեդական արւեստի հետ : Այդ դպրոցի հայ քանդա- կագործները եղան սելջուկեան թիւրքերի թագաւորութեան մահմե- դական արւեստի յուշարձանների կառուցանողները : Ամբողջ այդ ազգային - մշակութային վերելքը կապուած էր ահագին նիւթական հարստութիւնների կուտակման հետ հայ քաղքենիների եւ վանքերի ձեռքին : Քաղաքների մանր արհեստաւոր - գործաւոր զանգաւանների եւ գիւղացիութեան տնտեսական ստրկացումը պահանջ էր դարձը- նում գտնելու խաղաղ լուծման մի էլք , որ՝ դատելով քաղաքային ընակչութեան ամենավարի խաւերի մտաւոր բարձր աստիճանից եւ հայերէն գրագիտութեան տարածման չափից նոյն այդ խաւերի մէջ՝ տեղի ունեցաւ խաղաղ բնաշրջման ներքին միջոցներով : Բայց . . . վը- րա հասաւ մոնղոլական արշաւանքը , որ կործանեց վրաց թագաւո- րութիւնը եւ քար ու քանդ արաւ Հայաստանի ծաղկած քաղաքները , որոնց թուում եւ Անին : Քաղաքները խորտակուած էին մոնղոլական

ծանր տուրքերի ճնշման տակ: Հակառակ մոնղոլ խաների ձեռք առած միջոցների վերականգնելու համար հայկական երկրի նախկին հասոյթաբերութիւնը, չնայած Անիին շնորհած ներքին ինքնավարութեան, — այլևս կարելի չեղաւ անկման առաջն առնել. ծայր տրւեց հարուստ քաղքենիութեան, հայ առեւտրա - արդիւնաբերող դասակարգի արտագաղթը բուն Հայաստանից: Հայութիւնը բաժանւեց երկու հատածների - ազգի հիմնական մասը մնաց հայրենի երկրում՝ ճնշւած ու հարստահարւած, իսկ միւս մասը ցրւեց դանադան երկրներ, ուր տառապում էր հայրենաբաղձութիւնից:

Հայրենիքում դեռ մնում էր երկու օաղիս, ուր դեռ զգացւում էր ազատութեան շունչը - հիւսիս-արեւելքում, պարսից տիրապետութեան սահմաններում՝ Ղարաբաղը, ուր տեղական մելիքների մէջ դեռ պահւել էին ազգային այնչափանութեան մնացորդները, եւ հարաւ - արեւմուտքում՝ Զէյթունում, ուր ապրում էին անկախ հայ լեռնականները: Մնացած զանգւածը բաղկացած էր ճնշւած, հարստահարւած եւ արհամարհւած գիւղացիութիւնից եւ մանր արհեստաւորութիւնից: Այս մտայն վիճակը տեւեց 450 տարի, իսկ որոշ տեղեր՝ նաեւ աւելի: Երկրի ժողովրդի մի մասը լքում էր հայրենի հողերը եւ դիմում դէպի օտարութիւն: Այսպիսով մի շարք քաղաքներում, բայց մանաւանդ Պոլսում հաւաքւեց տասնեակ հազարներով հարուստ եւ ունեւոր հայ բնակչութիւն, որ բոլորովին կտրւեց հայրենի երկրից: Սերունդէ սերունդ ուժեղանալով գաղութների մէջ՝ հայութիւնը կրճատում էր հայարնակ շրջանները բուն Հայաստանում եւ այդպիսով թուլացնում երկրի հայութեան ոյժը:

Քրիստոնեայ Արեւելքի ամենաքաղաքակիրթ ժողովուրդներից մէկի հիմնական մասը թողնւած իր դժուր ճակատագրին, դատապարտւած էր արհեստական մայրենացման, գրւած էր սալայի խալտառակ գրութեան մէջ, արհամարհւած իր ուժով տիրապետող մահմետական ժողովրդի աչքին: Եւ այս լքւած եւ արհամարհւած գիւղացի բնակչութիւնը դեռ իր մէջ եռանդ էր դնում պահպանելու ազգային դիմագիծը - յեղուն, հաւատը եւ ազգային հոգաբարձեան զգացումը: Ազգային ինքնապաշտպանութեան գործում նրան ոյժ էր տալիս քրիստոնէութիւնը, բայց այլևս ոչ թէ՛ եկեղեցական, այլ կենցաղային քրիստոնէութիւնը իր դարաւոր ժողովրդական ուխտագրնադութիւններով, ժողովրդական հաւաքոյթներով ու խաղերով: Նրան դատախարակում էր գրականութիւնը, բայց ոչ գրաւոր, այլ բանաւոր ժողովրդական բանահիւսութիւնը, որ երգւում էր աշուղների բերանով. ողբերում էր պատմութիւնը, բայց ոչ գրքերի, այլ կենդանի, ժողովրդական աւանդութիւնների եւ հին ազգային շէն-

քերի աւերակների զեղարւեստական ձեւերի մէջ պահւած պատմութիւնը: Բայց եւ այնպէս հայերէն խօսքին ու հայ ազգութեան ըստ պառնում էր փճացումը: Մահմեդական պարսիկների, արաբների եւ թիւրքերի խօսքի հեղեղները սղողում էին հայերէն լեզուն: Կենդանի հայ բարբառները դիմադրիւելու վասնզին ենթարկւելու աստիճան ներգրաւում էին նոր - պարսկերէն, քրդերէն, արաբերէն եւ, մանաւանդ, թիւրքերէն բառեր եւ արտայայտութիւններ: Մահմեդականների հետ կենակցելուց փոխւում էր հայ ժողովրդի հոգեբանութիւնը. տեղ - տեղ հայերը խալամութիւն էին ընդունում եւ, վայրի համաձայն, արարանում կամ թիւրքանում էին: Եւ ահա այստեղ է, որ օգնութեան հասան հայկական դազութիւնները:

Առաջին հայ դազութիւնները դարդանում էին բուն Հայաստանի եւ դանազան ժողովուրդների միջեւ եղած առեւտրական յարաբերութիւնների ուղղութեամբ: Հայ առեւտրական դասակարգի յետեւից դնում ու տեղաւորում էր եւ հայ հողադործ դասակարգը:

Հայ առեւտրականներն աչքի ընկան դեռ արարական առեւտրի փայլուն ժամանակները: Հայ առեւտրական մի դազութ ծագում էր Վոլգայի ափերին, հին բուլղարական թագաւորութեան սահմաններում: 13-րդ դարում եւ աւելի ուշ հայ դազութներ երեւան կեան ոչ միայն հարեւան Վրաստանում, այլեւ Միջին Ասիայում, Խրիմում, որը մի ժամանակ Ծովային Հայաստան (Arménia Maritima) էր կոչւում, Լեհաստանում, ուր հայերին իրաւունք էր տրւած սեփական դատարաններ ունենալու, եւ յատին երկրներում: Արտագաղթի հոսանքը սաստկացաւ, մանաւանդ, Կիլիկիան թագաւորութեան անկումից յետոյ (1375 թ.):

Ազատ արտագաղթին յաջորդեց եւ բուն արտագաղթը (Շահ Արաւս եւ այլն): Այս յօժարակամ ու բունի դազթականութիւնները ծանր փորձութիւնների մատնեցին հայերին: Դեռ 15-րդ դարում Մկրտիչ Նազաչը հայոց գրականութեան մէջ մտցրեց պանդուխտի հայրենարագձութեան բանաստեղծական արտայայտութիւնը--

Հոգ մի՛ ասեր դարիպ, թէ չէ իմ սիրտս կարունի,
 Ղարիպն ի յօտար երկիր դէմ խիստ դիժար կուլիմի,
 Զինչ հաւքն երամէն ի գառ մոլորած մի տեղ չի հաւգչի,
 Այնչափ երերուն կեանայ մինչ որ իւր երամն հասնի:*)

Մկրտի ժամանակները բոյսը դազթականները մտքով կապւած էին Հայաստանի հետ, ապրում էին Ազատ Հայաստան վերագառնալու յոյսով: Այդ ժամանակաշրջանի հայ բանաստեղծների երկերն

*) Մկրտիչ Նազաչ, Վաղարշապատ, 1898, էջ 35:

լիքն են այդ արամազրութեամբ, որ յաճախ ստանում է համաշխարհային վշտի բնույթ անցողական կեանքի մասին:

Եկեղեցի, վանք, նախնիքների թողած թանգարժէք ձեռագիրներ, որ ու սրբազան անօթների հաւաքածոներ, դպրոց - աստ՝ այն ժամանակայ իւրաքանչիւր հայ դպրութի յատկանիշը:

Հայերի ձգտումը դէպի արեւմտեան Եւրոպան առաջ եկաւ հարաւային հայերի տածած համակրանքից, որ զարգացել էր շնորհիւ Կիլիկիայի ունեցած մշակութային եւ քաղաքական կապերին Եւրոպայի հետ: Հարաւային հայերը Եւրոպայից, Փրանկներէց էին սպասում քրիստոնեայ Հայաստանի փրկութիւնը:

Հարաւային հայերի ջանքերով բացւած ճանապարհով Արեւմտեան Եւրոպայից դէպի արեւելք շարժւեցին գլխաւորապէս կաթոլիկ մարդասերները, իսկ նրանցից յետոյ, շատ աւելի ուշ, նաեւ բողոքական եւ այլ եկեղեցիների քարոզիչները: Նրանք յաջողութիւն ունեցան գլխաւորապէս հարաւային հայերի հիմնած դպրութիւններում: Լեհահայերը, կաթոլիկութիւն ընդունելուց յետոյ, հեռացեալ սկսեցին կորցնել իրենց ազգութիւնը եւ յուճեցին լիւս եւ հունգար ազգութիւնների մէջ: Վրաստանում բնակող ազգազայնացած հայութեան մի մասը, որ իր մայրենի լեզուն փոխել էր վրաց լեզուի հետ, նոյնպէս բնիւ կաթոլիկ եկեղեցու գիրքը: Արեւմտեան Եւրոպայից եկող միախոնարների քարոզն ու մարդասերութիւնը բուն դիմադրութեան հանգիստեցին գլխաւորապէս բուն Հայաստանում:

Ի վերջոյ, Կոփիասեան աշխարհի հակումը ուղղեց դէպի հիւսիս: Առաջին գիմումը Ռուսաստանին եղաւ վրաց թագաւորների կողմից: Նոյն ճանապարհով գնացին եւ Ղարաբաղի հայ մելիքները:

Հայերը Ռուսաստանին ծանօթ էին ի վաղուց անտի, իրենց անւարական դպրութիւնների միջոցով: Վրաց թագաւորների գիմումը վերջացաւ Վրաստանի միացումով Ռուսաստանին, 1801 թւին: Հայկական նահանգների գրաւումից յետոյ, 1828 թւին, Ռուսաստանում հայկական եկեղեցին ամբաստնուեց թէ օրինական եւ թէ գործնական տեսակէտներից. հայոց կաթոլիկոսը պահեց իր հոգեւոր իշխանութիւնը բոլոր հայերի վրա:

Մօտ 75 տարի առաջ Ռուսաստանում ստեղծւեց ուսահայերի գրական լեզուն՝ հիմք ունենալով հիւսիսային հայերի բարբառը: Վերածնւած հայ գրականութիւնը իր զարգացման բարձրագոյն ձեւերն ստացաւ բազմադարեան հայկական քաղաք Թիֆլիսում, որ յետոյ դարձաւ Վրաստանի մայրաքաղաքը: Վրաստանի հայ դպրութիւնները բնական ձգտում գրացին դէպի լքած հայրենիք եւ դպրոցի ու գրականութեան շնորհիւ սկսեցին փերածնւել եւ վրաց հաւաքա-

կանութեան երրորդ դասակարգի վիճակից վերածել հայ հասարակական ուժի:

Ռուսաստանից էր, որ թիւրքիա գնացին թիւրքահայ գիւղացիութեան հոգեւոր վերածնունդի առաջին ուսմիւրանները: Ռուսաստանում էր, որ ծագեց թիւրքահայոց ազատագրական շարժման գաղափարախօսութիւնը: Ռուսաստանում էր նոյնպէս, որ ծնունդ առաւ դործի ընկերակցութիւնը՝ յայտնի Դաշնակցութիւնը, որ հին կղերական ու նոր քաղքենի հիմնարկութիւնների բացած ճանապարհից դուրս, ելք է որոնում դէպի նոր, իսկական ժողովրդական ճանապարհը:

Կովկասեան աշխարհի ընդհանուր մշակոյթի եւ նրա հետ կապած սեփական հոգեւոր անկախութեան պաշտպանութեան մէջ նոյն աշխարհի հազարամեայ քաղաքակրթութեան պաշտպանութեան համար վարած ընդհանուր ազատագրական պայքարում քաղաքակիրթ եւ անքաղաքակիրթ բռնաւորները դէմ, հայ ժողովուրդը իր հայրենիքում գրկեց հին ու նոր երկու թագաւորութիւններից, գրկեց ազգային ազնւականութիւնից, գրկեց հայրենի քաղաքների քաղքենի դասից, գրկեց հարադատ հողի մեծ մասից, գրկեց վերջապէս, իրար յաջորդող առաջաւոր ընկերային ուժերի ստեղծած փայլուն մշակութային յաջողութիւններից: Սակայն, պահեց իր դործոն ուղին, որ գաղութներում, քաղքենի շրջաններում, թիւրք բռնակալութեան դէմ մղուող կռոււմ, պայքարի քաղաքակրթական ղէնքեր կռեց նրա համար: Միայն դրա մէջ է իրակուն երաշխիքը հայ ժողովրդի ազգային վերածնութեան յօդուտ բովանդակ Կովկասի մշակութային աշխարհի:

Հայերի ազգային պարտականութեան գիտակցութիւնը լայն հիմք է դնում 15 դարերի տարածութեան վրա դարգացող քրիստոնէական հարուստ գրականութեան մէջ: Դա մի դերացոյն պարտականութիւն է ազգի եւ մարդկութեան առջեւ: Բայց նոյն այլ փայլուն ստեղծագործութիւնը որ չմարեց նոյն իսկ ամենամոռայ բարբարոսութեան շրջանում եւ անչէջ կանթեղի սէս վառ մնաց անրնդհատ, անմանելի պարտականութիւն է դնում ե՛ւ մարդկութեան վրա: Ինքն իրեն քաղաքակիրթ համարող ո՛չ մէկ ժողովուրդ, որ զգայուն է դէպի հոգեւոր նւաճումներն ու գեղեցկութիւնները, որ ուշագիւր է մարդկային ստեղծագործ ուժերի վերարեբմամբ, չի կարող խուսափել իր վրա ընկած պարտականութիւնից՝ կենդանի ու վառ պահել այդ նւաճումներն ու գեղեցկութիւնները:

Փարիզ.